

Բայց մեզ աստանօր կարեւոր դիտումն է առընչութիւն նորին ընդ պատմութեան ազգիս, եւ առանձինն Լեւոնի. զի ոչ պակաս քան զամս հնգետասան՝ եղեն սոցա թղթակցութիւնք, խնդիրք եւ վեճք իսկ. մի՛ ՚ի մեծագոյն դիպուածոց յիշխանութեան նոցին. եւ բաց ՚ի Յովհաննէ ԻԲ, կարծեմ սորա (Իննովկ.) գտանին յոգնաթիւ թուղթք առ մերայինս, եւ մերայոցս առ նա, շատն վասն Անտիոքեան խնդրոյն. աւելի քան զքառասուն՝ յայտնի են մեզ եւ ունինք զպատճէսն, ոչ երկբայելով յոլովագոյն գոլ զանյայտացեալսն եւ զկորուսեալս¹⁰²:



¹⁰² Քանզի պակասեն (զէթ մեծագոյն մասամբ) եւ ՚ի դիւանս Վատիկանի չորք Գիրք թղթոց կամ թուղթք չորից ամաց, այսինքն են Դ, ԺԷ, ԺԸ, ԺԹ. մէն մի ՚ի Գրոցն կամ հատորոց՝ պատկանի միոյ յամաց քահանայապետութեանն Իննովկենտեայ, որ սկսաւ յ՛8 յանուարի, 1198, եւ կատարեցաւ ՚ի 16 յուլիսի, 1216. ըստ այսմ՝ հաշուին նմա 19 ամբ եւ 19 հատորք թղթոց. եւ զայս նշանակեն թիւք (մեծատառք) որք ՚ի ծանօթութիւնս Զ Դրուագի, իսկ բոլորգիր տառքն՝ զթիւ թղթոց իւրաքանչիւր գրոց կամ ամաց: